ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

№-՛/16

« 26 » « 12 » 2011թ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2012թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

ՂԵԿԱՎԱՐԵԼՈՎ « ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ » ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ԵՎ « ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ » ՀՀ ՕՐԵՆՔԻ 16-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 18-ՐԴ ԿԵՏՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բերքանուշ համայնքում 2012թ. համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը :

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվում է հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300մ^2 ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200մ^2 ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10.0 հազ.դրամ :

2) սյուն կետի 1) ենթակետում չնախատեսված օբյեկտների համար

ա) 201-ից մինչև 500մ^2 ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 30.0հազ. դրամ:

բ) 501-ից մինչև 1000մ^2 ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50.0հազ. դրամ:

գ) 1001 և ավելի մ^2 ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 70.0հազ. դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

դ) մինչև 20մ^2 ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 3.0հազ. դրամ:

ե) 20 և ավելի մ^2 ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 5.0հազ. դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի / համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցնե-

րի / այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքի գործառական նշանակության փոփոխություն՝ մինչև՝ 3.0հազ. դրամ:

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքից, նախատեսված է նաև կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքի գործառական նշանակության փոփոխություն՝ ապա բացի սույն կետի 1) ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով :

3) նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն , որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման առաջին կետով սահմնված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5.0հազ. դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 4.5հազ. դրամ:

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 4.5հազ. դրամ:

5. Համայնքի տարածքում.

1) Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմնվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ :

6) Հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմնվում է 150.0հազ. դրամ :

7. Համայնքի տարածքում առևտրի , հանրային սննդի , զվարճանքի , շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները , բաղնիքները / սաունաները / , խաղատները ժամը 24^{00}–ից հետո աշխատելու թույլտվության համար, տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է `

1) առևտրի օբյեկտների համար 25.0հազ. դրամ
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 80.0հազ. դրամ
3) բաղնիքների /սաունաների/ համար 200.0հազ. դրամ
4) խաղատների կազմակերպման համար 500.0հազ. դրամ
5) շահումով խաղերի կազմակերպման համար 250.0հազ. դրամ
6) վիճակախաղերի կազմակերպման համար 100.0հազ. դրամ

8. Համայնքի տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երթուղային տաքսիների / ծառայության իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 6.0հազ. դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1.0հազ. դրամ :

10. Հիմք ընդունելով « Տեղական տուրքերի և վճարների մասին » ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանել հետևյալ վճարների տեսակները `

1) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալութ-

յան տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և նման այլ աշխատանքների համար մատուցած ծառայություն-ների դիմաց վարձավճար սահմանել 1.0հազ. դրամ :

2) համայնքի կողմից աճուրդներ և մրցույթներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 1.0հազ. դրամ :

Որոշման 1-ից 3-րդ կետերում սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0.5 գործակիցը :

Ավագանու անդամներ՝

Հ. Ռուշանյան

Ն. Գրիգորյան

Լ.Մնացականյան

Համայնքի ղեկավար Մ.Գ.Հայրապետյան

Քարտուղար Ռ.Մ.Համբարձումյան